*յօրէնս և կարգս կանօնին հայաստանեաց, մի լռեսցի լեզու և մի երկիցէ սիրտ քոյ ազատապէս բանալ բերանն քոյ և ճառել առաջի ատենի իրաւունս և արդարութիւնս Օրինաց Հայաստանեաց. գրուեցաւ ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն Հայոց յունվար մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773։*

| | |
|---|---|
| *Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.* | *Սեղբեստրոս արք Եպիսկոպոս, երկրորդ Տանուտէր,* ○ |
| *Միքայէլ իշխան,* ○<br>*Մանուէլ Գծագիր.* ○ | *Վրթանէս կաղնոյ երրորդ Տանուտէր,* ○<br>*Գալստան կաղզվանոյ չորրորդ Տանուտէր։* ○ |

Օրինակ նամակ Դատաւորութեան 'ի մէջ մայրաքաղաքաց:

## ԳԼՈՒԽ ԿԱ.

*Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան 'ի գաւառէն բզնունեաց և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ Տեառն Միքայէլ գինունիդ, և երդմնելով քոյ առաջի ատենի տանուտէրաց հայոց, հաստատեցաք 'ի սիրտս մեր հաւատարիմ քեզ 'ի վերայ տանն հայոց, տուաք պաշտօն դատաւորութեան քեզ 'ի վերայ քաղաքին յերևանու 'ի աշխարհն արարատու հայոց,*